

29. ԷԶՄԻԱՆՆԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԻՒՆԸ

Մովսէս կաթողիկոս հռչակ վայելեց ընդհանուր հայութեան մէջ յատկապէս էջմիածնի Տաճարին վերանորոգութեամբ: Մայր աթոռին ամայացեալ վիճակը սրտցաւութեան առիթ էր ամէն լաւ հայու համար: Այս պատճառաւ ալ Ջուղայեցիք պահանջած էին Դաւիթ կաթողիկոսէն, որ վերադառնար էջմիածին եւ դոնէ իւր ներկայութեամբ փայլ տար Տաճարին: Բայց ծերունի եւ անկարող կաթողիկոսը չկրցաւ դիմադրաւ ըլլալ զրկանքներու, նաեւ Մելքիսեդեկ կաթողիկոսի կողմէն դազտնի եւ յայտնի հակառակութեանց, եւ նոյն անխնամ եւ այրի վիճակի մէջ թողլով էջմիածինը առանձնացաւ Ասպահան:

Մովսէս վարդապետ այժմ Երեւան կը գտնուէր. եւ մօտէն ականատես էր էջմիածնի օր աւուր վատթարացող կացութեան: Բայց չէր կրնար որ եւ է դարման տանիլ անոր, քանի կար Մելքիսեդեկ կաթողիկոս: Նախախնամութեան որոշ մէկ տնօրէնութիւնն եղաւ, որ 1627ին սպիտակ մոմ պատրաստելու արուեստովը հաճոյացաւ Մովսէս Շահ Արասին եւ ստացաւ անկէ ի վարձատրութիւն իւր մատուցած ծառայութեան՝ էջմիածնի լուսարարութեան պաշտօնը մասնաւոր արտօնութեամբ: Փութաց այնուհետեւ Մովսէս հասնիլ Փահրապատէն Երեւան եւ տեսնել